

«Խորին վրդովմունքով բողոքում եմ...» խորհրդահայ քաղաքացու ձայնն ընդդեմ քաղաքական բռնությունների

Խորհրդային իրականության մեջ, հատկապես ստալինյան ամբողջատիրության առօրյայում, թերևս, ամենացածրը լսելի էին բողոքի ձայները: Ամբողջատիրական կառավարման անքակտելի գծերից է հասարակության տոտալ նվիրվածության ապահովումը, որին հասնելու, թերևս, ամենաուղղակի և գորեղ միջոցը եղել և մնում են քաղաքական բռնաճնշումները: Ուշագրավ է, որ անգամ բռնությունների առօրյայում, երբ իրենք՝ բռնությունների զոհերը հաճախ արդեն քիչ քան ունեին կորցնելու, բողոքն արտահայտելու հարցում շարունակում էին ցուցաբերել խիստ զսպված վարք: Սրա լավագույն վկայությունը կարող են լինել բռնությունների ենթարկվածների, մասնավորապես, 1949 թ. հայկական աքսորի զոհերի նամակ-դիմումները խորհրդային *վերններին*¹ սկսած արտաքսման իսկ օրից¹: Խորհրդային *ներքններից* կամ ինչպես ընդունված է ասել՝ «տեղերից», *վերններին* ուղված համանման նամակները հետագոտողները որակում են իշխանության հետ հարաբերվելու, երկխոսության մեջ մտնելու յուրօրինակ միջոցներ «բնակչության և պետության շփման և փոխհարաբերությունների՝ դեմոկրատական հասարակությանը հատուկ ձևերի բացակայության պայմաններում» (Лившин, Орлов, 1998, 489): Հարաբերվելու այս կերպի համար, թերևս, արդարացված է վերև - ներքև հակադրության կիրառումը՝ նկատի ունենալով նամակների միջոցով ծավալվող շփման ոչ իրավահասարությունը, շփում, որի մի կողմում «իրավագուրկ և նսեմացված խնդրող» է, մյուս կողմում «հզոր և ներողամիտ պատրոնը»

¹ Շարքային քաղաքացիների՝ խորհրդային վերններին ուղված նամակները (նամակ-դիմումներ, բողոքներ, առաջարկներ, դոնտսներ և այլն), սկսած բոլշևիկյան իշխանության հաստատման առաջին տարիներից, հետխորհրդային տարածքում միայն Խորհրդային Միության փլուզումից հետո են դարձել այդ շրջանի պատմության ուսումնասիրության աղբյուր: Իրրև հետագոտական աղբյուր նամակների քննությունը տես. Лившин А., Орлов И., Революция и социальная справедливость: Ожидания и реальность (Письма во власть. 1917-1927).- Cahiers du monde russe : Russie, Empire russe, Union soviétique, États indépendants, vol. 39, n°4, Octobre-décembre 1998. pp. 487-513: Հայաստանյան գիտական միջավայրում քաղաքական բռնաճնշումների ենթարկվածների նամակներն ուղղված խորհրդային իշխանության ներկայացուցիչներին վերջին մի քանի տարում են առաջ բերել հետագոտական հետաքրքրություն, մասնավորապես, 1949 թ. աքսորյալների նամակների քննությանն անդրադարձել են երիտասարդ գործընկերներս, տես. Hakobyan A., “Peredovie” Comrades: The Image of an “Ideal” Soviet Citizen According to Letters of Complaint Written by Armenian Deportees From 1949.- Analytical Bulletin. Armenian-Georgian Cooperation Through Academia and Students’ Inclusion, N° 10, Yerevan, 2017, 126-147:

(Лившин, Орлов, 1998, 489): Մա դրսևորվում է ոչ միայն նամակների բուն բովանդակային, այլև հաճախ արդեն իսկ դրանց վերնագրային մակարդակում: Նամակագիրներից շատերը դրանք անվանում են «խնդրանք» կամ «խնդրագիր», ոմանք՝ նույնիսկ «աղերսագիր»: Եթե անգամ դրանք չունեն նման վերնագրեր, մինևույն է, նամակ-դիմումների ճնշող մասը *խնդրագրեր* են իրենց բովանդակությամբ, որոնց շատ հատուկ է թախանձագին/աղերսագին ոճը: Անգամ նման թախանձագին ոճով նամակներ գրելը հեղինակները երբեմն մեծ համարձակություն են համարում, որի մասին նրանք հատուկ նշում են նամակի սկզբում և վերջում. «... ներողություն համարձակությանս համար, որ ես այս կարգով Ձեզ նեղություն եմ պատճառում... դարձյալ ներողություն եմ խնդրում Ձեզ ավելորդ նեղություն պատճառելուս համար և խնդրում եմ, որ անպայման պատասխանեք դիմումիս և ազատեք ինձ այս տանջանքից: Ձեր խոնարհ քաղաքացի՝ ...» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 841): Որոշ դեպքերում աղերսն այնքան է խտացվում, որ ձեռք է բերում հոգևոր շփման տարրեր, որի մի կողմում մարդկային վերքերը բուժող երկնային տիրոջը հիշեցնող առաջնորդն է, մյուս կողմում երկրային մահկանացուն. «Սույն դիմումով ծնկաչոք աղերսագին խնդրում եմ լսեք մի անբախտ ծնողի սրտամորմոք ցավը և բուժեք նրա վերքը»² (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 2275): «Խնդրագրերի» կողքին արխիվային գործերում հանդիպում են նաև «բողոք» կամ «բողոքագիր», իսկ առանձին դեպքերում էլ՝ «գանգատ» վերնագրված դիմումներ, որոնք նամակների թախանձագին-խնդրողական համընդհանուր տրամադրության մեջ անմիջապես ուշադրություն են գրավում իրենց պահանջատիրական, «բողոքական» ոճով: Ընդհանուր առմամբ, նամակ-դիմումներ գրելու պրակտիկան (ընդ որում, ոչ միայն ԽՍՀՄ-ում) բնորոշվում է որպես պետության՝ քաղաքացիների հետ շփման լիմիտավորված ձև, որի կարիքն ունի հենց ինքը՝ ռեժիմը՝ ապահովելու համար հակադարձ կապը. դրանք կարևոր «ազդանշաններ էին տեղերից», որոնց միջոցով էր նաև պետությունն իրականացնում իր գործառույթները (Лившин, Орлов, 1998, 489): Նամակագրության նման *թույլատրելիությունը* վերևների կողմից, սակայն, եթե ամբողջապես գործում էր արքայալիների պարագայում, ապա նույնը միշտ չէ, որ կարելի է ասել հայրենիքում մնացած նրանց հարազատների մասին: Ընդ որում, վերջիններիս կողմից իշխանական վերևների հետ շփման այս ձևից օգտվելու հարցում արդիական էր ինչպես *ինքնազուպման* գործոնը (ի տարբերություն արքայալիների, նրանք

² Առհասարակ, Ստալինի անձի և քաղաքականության սակրալիզացման առումով նամակ-դիմումները հարուստ նյութ են պարունակում:

կորցնելու բան ունեին), այնպես էլ, որոշ դեպքերում, պետական տեղական ավելի ցածր օղակներից եկող արգելքները: Կան մասնավոր դեպքեր, երբ նամակագրությունը թանկ է նստում վերջիններիս վրա: 92-ամյա գրուցակիցներիցս մեկն արցունքն աչքերին պատմում էր, որ հայրական ընտանիքին աքսորելուց անմիջապես հետո սկսել է հեռագրել Ստալինին, անթիվ դիմումներ գրել իշխանության տարբեր ներկայացուցիչներին, ինչի պատճառով արժանացել է տարածքային պետանվտագության բաժնի պետի անմարդկային վերաբերմունքին. գրեթե ամեն գիշեր ժամանում էին պետանվտագության զինված աշխատակիցներն ու նրան բերման ենթարկում պետի մոտ: Վերջինիս հետ հանդիպումը նշանակում էր ահաբեկում, այլևս երբեք նամակ չգրելու պահանջ և ուշագնացության հասցնող ծեծ: Նման հետապնդման հետևանքով գրուցակիցս ստիպված էր անգամ թողնել իր փոքր ընտանիքը՝ կնոջն ու նորածին երեխային, և առժամանակ տեղափոխվել Քարվաճառ՝ հոր թուրք ծանոթներից մեկի տուն: Ճիշտ է, ոչ դաժան ծեծերը, ոչ հետապնդումներն ու տեղափոխությունը չեն ստիպում նրան դադարեցնել, բառիս բուն իմաստով, նամակներ տեղալը խորհրդային վերևների վրա, սակայն նման իրավիճակը խոսում է աքսորյալների և հայրենիքում մնացած նրանց հարազատների՝ խորհրդային *վերևների* հետ նամակների միջոցով հարաբերվելու թույլատրելիության տարբեր աստիճանների մասին (Ստեփանյան, ԴԱՆ, Վարդենիս, 2015): Այս օրինակը գալիս է խոսելու գործընկերոջս՝ Գ. Շագոյանի առաջարկած «երկու խորհրդային աշխարհների» մասին վարկածի օգտին՝ ի դեմս խորհրդային աքսորավայրի և մնացած «խորհրդային երկրի», որոնք ունեին «խոսքի և մտքի ազատության տարբեր պայմաններ» (Շագոյան, 2015, 176-177). աքսորավայրն իբրև առանձնացված «փակ համակարգ» երբեմն կարող էր վայելել պետության հետ շփման թույլատրելիությունը կամ թույլատրված ազատությունն ավելի մեծ չափաբաժնով, քան նախկին բնակավայրը:

Եթե խնդրագիր-դիմումների հեղինակները փորձում են ամեն գնով արդարանալ պետության առջև ոչ միայն և ոչ այնքան իրենց առաջադրված բուն «մեղքի» (դաշնակ-նացիոնալիստ, գերմանական բանակի «հայկական լեգեոնի» մասնակից և նրանց ընտանիքների անդամներ), այլ հնարավոր թվացող բոլոր մեղքերի համար, ապա բողոքագրերի հեղինակները սեփական անմեղությունն ապացուցելու՝ արդարանալու հետ մեկտեղ (ի դեպ, հենց այստեղ է, որ բողոքների հեղինակներն իրենք էլ կարող են սայթաքել *արդարության* առջև՝ մինչև իսկ երբեմն ջնջելով «մատնիչի» և «գոհի» միջև եղած երեքուն սահմանը), դնում են արդարության

վերականգնման պահանջ: Վերջինս բողոքների համար նախևառաջ ոչ այլ ինչ է, քան իրենց նկատմամբ հետաքննություն և դատական գործընթաց վարելը և միայն այդ՝ օրինական ճանապարհով իրենց մեղքը հաստատելը: Մարդկանց որոշակի մեղադրական կատեգորիա առաջադրելն ու դրա հիման վրա ընտանիքով աքսորելու որոշում կայացնելը ՍՍՀՄ ՊԱՄ-ին կից գործող Հատուկ խորհրդակցության գործն էր, որը, չլինելով դատական մարմին, չէր վարում դատական գործընթաց և կայացնում դատական վճիռ: Բռնի տեղահանություններն այլ խոսքով արտադատական բնույթ ունեին, ինչը բնորոշ է ամբողջատիրական կառավարմանն ընդհանրապես և տեղահանությունների խորհրդային պրակտիկային՝ մասնավորապես: Հատկանշական է, որ նրանցից շատերը այդ բաղձալի դարձած դատական պրոցեսը հենց իրենք էլ կառուցում են բողոք-նամակներում, ըստ էության, շարադրելով վիրտուալ դատական պրոցես, որտեղ նամակագիրն ինքը ներկայանում է միաժամանակ հարցեր տվողի ու պատասխանողի դիրքերից: Նման վիրտուալ դատական պրոցեսով նամակների եզրափակումը հաճախ դառնում է առաջարկը խորհրդային իշխանություններին պատժել իրենց ավելի խիստ, քան *հատուկ բնակեցումն* է, օրինակ, ձերբակալել ու բանտարկել, եթե միայն արդար քննությամբ և դատական կարգով ապացուցվի իրենց մեղքը. «... *խնդրում եմ Ձեզ հարգելի Վորոշիլով, թոպեներ տրամադրեք ինձնով հետաքրքրվելու, եթե կգտնեք, որ ունեմ գոնե գնդասեղի ծայրի չափ հանցանք, ապա կարող եք իմ նկատմամբ ավելի խիստ պատիժ սահմանել*» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 2275), «*Ես պահանջում եմ, կամ ինձ պատժեք հանցանքի գերագույն պատժով կամ իմ հարցով զբաղվեք և ինձ ասեք իմ մեղքի էությունը*» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 807):

Աքսորյալների գործերի ամբողջական քննությունը ցույց է տալիս, որ բողոք-դիմումներն իրականում վեր են հանում բազմաթիվ խնդրագրերում զսպված, թախանձագին ոճի ներքո խնամքով թաքցված ու կուտակված զայրույթն ու ցասումը: Այսպես, նամակագիրներից մեկը գրում է. «*Ես որպես Սովետական քաղաքացի, սովետական մայր, սովետական կին, այնքան եմ խոցված և վիրավորված, որ չեմ կարող այլևս ինձ զսպել և չափավոր ձևանալ: Մեր սովետական անձայրածիր հայրենիքը ոչ ոքի չի լքում և անտեսում. իսկ ինձ, գտնվեցին մարդիկ՝ «սովետական» մարդիկ, որոնք լքեցին այն աստիճան, որ նույնիսկ իմ դիմումիս չեն բարեհաճում պատասխանել, կամ դրական, կամ բացասական*» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 807):

Ուշագրավ է, որ բողոք-նամակներում, մեծամասամբ, աքսորյալների նկատմամբ անարդար վարմունքի մեղադրանքն ուղղված է ոչ թե միութենական, այլ տեղական՝ հայաստանյան

իշխանությունների ներկայացուցիչներին՝ սկսած արտաքսման գործերը նախապատրաստող Հայաստանի ներքին գործերի և անվտանգության մարմիններից մինչև տեղական՝ գյուղական մակարդակի պաշտոնյաները: Այս են վկայում նաև գրույցները արտոյալների հետ, որոնցում, սակայն, շեշտվում է առավելապես գյուղական ղեկավարների դերակատարումը: Այսպես, Հ. Մարությանը, ստալինյան բռնություններին նվիրված իր հետազոտություններից մեկում, փաստում է, որ իր «Զրուցակիցների մի որոշակի մասը առաջնահերթ մեղավոր են դիտում գյուղխորհրդի և/կամ կոլտնտեսության ղեկավարներին, ում որ հանձնարարված էր տեղեկացնել «Ժողովրդի թշնամիների» մասին՝ համապատասխան ցուցակներ ներկայացնելով «վերններին», այն է՝ վերադասին» (Մարության 2015, 208): Նամակներում «բողոքողները» երբեմն չեն խուսափում սուր ձևով բնութագրել Հայաստանի ներքին գործերի և անվտանգության մարմինների աշխատանքը և կոնկրետ մեղադրանքներ ներկայացնել նրանց. «1952 թ. ռայոնի ՄԵԸ-ն կանչեց ռայոն և հայտնեց, որ քեզ և ընտանիքիդ արտորել են այն պատճառով, որ իբր թե հայրդ եղել է «դաշնակ» - հանցագործություն, որ բոլորովին հիմնավորված չէ և նույնիսկ ծիծաղելի փաստարկում: Ես ծնվել եմ 1916 թվին, հայրս մահացել է 1917 թվին, տաճկահայերի կոտորածի ժամանակ... մորս պատմելով հայրս եղել է մի անգրագետ գյուղացի հողագործ: ... միանգամայն պարզ է, թե ո՞րքան թխված հերյուրանք են ստեղծել և մեզ արտորել, ես գտնում եմ դա բացարձակ զրպարտություն է և չհիմնավորված մեղադրանք... բողոքելով իմ անհիմն կերպով վտարելու դեմ, որպես ապօրինի վտարված, և որպես անմեղ մեղավորի, խնդրում եմ աչալուրջ և մանրազննին քննություն կատարեք...» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, թ. 2397): «Ինձ արտաքսելը մեծ սխալ էր տեղական օրգանների կողմից և դրա համար ես աղմուկ չեմ բարձրացնում հուսալով, որ սխալը կուղղվի, բայց այն, երբ ես մի 4-5 անգամ դիմում եմ և նույնիսկ իմ դիմումիս պատասխան չեմ ստանում, սա արդեն վիրավորական է: Ինչո՞ւ են անտեսում ինձ և իմ բողոքը... Ընկեր Կորխմազյան, ես ձեզ հարց եմ տալիս և այս անգամ արդեն պահանջում և ոչ խնդրում, որովհետև 4-5 անգամ խնդրում եմ և ապարդյուն, թե ինչ պատճառով եք ինձ արտաքսել» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 807):

Հատկանշական է, որ հայաստանյան իշխանական վերնախավի դեմ բողոքն ուղեկցվում է Ստալինի մտքերի մեջբերմամբ. «Ընկեր Ստալինն ասում է, որ ամեն մի դիմումի հետ կենդանի մարդ է կանգնած, իսկ իմ դիմումին ցույց են տալիս բյուրոկրատական-չինովնիկական վերաբերմունք» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 807): Սրանով նամակագիրները փաստում էին իրենց հարգանքը և հավատը առաջնորդի հեղինակության և

արդարամտության հանդեպ՝ հնարավորինս հեռացնելով նրանից իրենց բողոքի ձայնը և ուղղելով այն միայն տեղական ապաշնորհ, անարդարացի չինովնիկներին, որոնց պատճառով էր, որ մարդիկ անհիմն կերպով տառապում էին հայրենիքից հեռու, այլթայան խստաշունչ սահմաններում³: Մեկ այլ բողոքող աքսորյալ մեջբերում է *ընկեր Ստալինի* մի ուրիշ թևավոր դարձած խոսք՝ «Մարդն ամենաթանկարժեք կապիտալն է», *իսկ Հայաստանի նախկին Անվտանգության մինիստրության որոշումն իրեն արտաքսելու մասին ուղղակի նշանակում է, որ "Մարդն ամենաէականագին կապիտալն է աշխարհում"*» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 238):

Սակայն, ինչքան էլ որ խորը և հաստատուն լինեի հավատը խորհրդային երկրի բարձրագույն իշխանության նկատմամբ, նամակագիրները շատ դեպքերում շարադրանքի ընթացքում ի վերջո դուրս էին գալիս տեղական՝ հայաստանյան մարմինների շրջանակից և իրենց բողոքի ու գայրույթի իրական հասցեատեր դարձնում, ճիշտ է, անդեմ կամ չանձնավորված, բայց, այնուամենայնիվ, իշխանությանը կամ կուսակցությանը, խորհրդային ողջ երկրին. «Մի ամբողջ ընտանիք գրկվել է յուր օրինական իրավունքներից, դատապարտվել է ազատագրկման, գրկվել է երջանիկ ու բախտավոր կյանքից, և չգիտես հանուն ինչի՞: Մի թե այդքան հեշտ է Սովետական երկրում մի ամբողջ ընտանիք դատապարտել առանց որևէ հիմնավորված մեղադրանքի, առանց որևէ դատի, ապացույցների, վկաների ու առերեսման: Ես պահանջում եմ պարտիայի և կառավարության որոշումները սովետական մարդկանց վերաբերյալ կիրառել նաև իմ հարազատներիս նկատմամբ» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, թ. 2451): «Մի թե Սովետական երկրում կարելի է հանդուրժել նման անարդար քայլ, մի թե կարելի է մարդկանց սրբազան իրավունքները այդքան բացարձակ ձևով ոտնատակ անել: Մենք բողոքում ենք և պահանջում ենք մեղավորներին ամենախիստ պատիժը տալ... Ո՞վ կարող է երևակայել, կամ ո՞ր օրենսգրքում կարող է լինել ու գրվել նման բան, որ մարդկանց պատժել առանց քննության, առանց վկաների առերեսման և առանց դատարանի» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 919), «Մեր կուսակցություն և կառավարություն ինչու եմ ես ներկա պահին կրում հատուկ բնակեցվողի կոչումը: Կարծես թե գործում են օրենքներ, որ անմեղ մարդկանց չեն պատժում, բայց ինչու են ինձ ուղարկել հավերժ հատուկ բնակեցման... Եթե կառավարությունն իմ մասին

³ Այս ընդհանուր հանգամանքը, սակայն, չի բացառում Ստալինի հանդեպ ոչ թե իրական, այլ ձևական հարգանքի ցուցադրությունը:

կգտնի ապացուցող փաստեր, որ ես մեղավոր եմ, խնդրում եմ ուժեղացնել պատժի ձևը՝ քանտային ձեռքակալությամբ» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 2216):

Պետք է նշել, որ դիմում-բողոքներ գրվել են ինչպես Ստալինի մահից առաջ՝ մինչև 1953 թ. մարտը, այնպես էլ հետո, երբ որոշ չափով և աստիճանաբար սկսեց թուլանալ ընդհանուր լարվածությունը: Սակայն, ի հակադրություն «խնդրագրերի», ձեռքիս տակ եղած շուրջ երկու տասնյակ բողոքների ու բողոքի կարգով գրված նամակների հասցեատերերի շարքում ինքը՝ Ստալինը, հայտնվում է միայն մեկ անգամ. «... որպես Սովետական քաղաքացի ու օգտվելով Սովետական լայն դեմոկրատիայի իրավունքներից և Ձեր մշակած Սահմանադրությամբ իրավունք ունեմ և պահանջում եմ իմ քաղաքացիության իրավունքով հայտնեք ինձ իմ արտաքսման պատճառը, արդյոք ինչ հանցանքի համար արտաքսվեցի և երեխաներիս ինձ հետ զրկեցի մայրենի լեզվից ու կրթությունից» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 629): Սա ևս գալիս է վկայելու առաջնորդի «անմեղության» և արդարամտության հանդեպ հաստատուն հավատի մասին: Ուշագրավ է, որ նման հավատով տոգորված էին ոչ միայն «շարքային» խորհրդային քաղաքացիները, այլ նաև խորհրդային մտավորականները: Հաննա Արենդը, անդրադառնալով նացիստական և ստալինյան ամբողջատիրական համակարգերի ընդհանրություններին, բերում է ստալինյան ինտելեկտուալների՝ երկրում թևածող ահաբեկչության մեջ ամենևին ոչ Ստալինին մեղադրելու համոզմունքի արտահայտություններ՝ որպես առհասարակ ամբողջատիրությանը հատուկ իրողություն. «Ստալինը ոչինչ չգիտի կոմունիստների, սովետական ինտելիգանցիայի դեմ իրականացվող բռնաճնշումների մասին», «նրանք թաքցնում են դա Ստալինից», «եթե միայն ինչ-որ մեկը պատմեր այս մասին Ստալինին...» (Арендт 1996, 19): Այս նույն համոզմունքը շատերի, այդ թվում և բռնաճնշումների անմիջական զոհերի մեջ շարունակում է մնալ արդիական առ այսօր, ինչի վկայությունը զրույցներն են նրանց հետ: Գուցե հենց այս համոզվածությունն ու հավատն էր բողոքների հեղինակներին, կլինեն նրանք հարազատներ Հայաստանից, թե հենց աքսորյալներ Սիբիրից, ավելի անկաշկանդ ու համարձակ դարձնում քաղաքական բռնությունների դեմ իրենց շատ տրամաբանական, մարդկային անհամաձայնությունը հայտնելու հարցում: Արդյունքում, որոշ բողոքներում, կարող ենք նկատել իսկական քաղաքացիական դիրքորոշման փայլուն դրսևորումներ:

Մյուս կողմից, բողոքի հասցեատերերի առումով նման խիստ բևեռացումը (երկրի առաջնորդ – միութենական և հայաստանյան իշխանության այլ ներկայացուցիչներ) ավանդական

հայրիշխանական մեծ ընտանիքի մոդելով երկիրը կառավարող առաջնորդի հետ բողոքի ոճով, պահանջատիրության ոգով խոսելու ինքնագույն վկայությունը կարելի է համարել: Այդ մոդելը, կարծես, միանգամայն ընկալելի էր «տեղերում», մասնավորապես, աքսորյալների շրջանում: Նրանց նամակներում «ժողովուրդների հայր» Ստալինը սահուն կերպով դառնում է նաև ընտանիքի հայր՝ ստանալով «թանկագին հայր և ուսուցիչ», «սիրելի հայր», «անմոռանալի հայր» և համանման էպիտետներ: Նույն էպիտետները նամակներում ինքնաբերաբար փոխանցվում են երկրի առաջնորդի փոխանորդներին՝ խորհրդային բարձրագույն (և ավելի ցածր մակարդակի) իշխանության մյուս ներկայացուցիչներին: Նամակագիրները հաճախ բառացիորեն ծնողական վերաբերմունք են ակնկալում առաջնորդից (առաջնորդներից)՝ իրենց արտաքսման հարցը լուծելու գործում. *«Խնդրում եմ Ձեզ ցույց տաք Ձեր հայրական հոգատարությունը՝ պարզաբանելու իմ և ընտանիքիս տեղափոխվելու պատճառը և պարզաբանելու ինձ իմ ընտանիքով հայրենիքս վերադառնալու հարցը»* (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 827), *«Մեծարգո նախագահ քաղաքացի Մալենկով, թույլ տվե՞ք իմ համարձակությանը իրագել դարձնելու Ձեր ղեկավարած մեծ ընտանիքի անդամներից մեկի դժբախտության... մասին»* (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 962): Նամակներում կառուցվող ծնող – զավակ կապի մեջ «զավակներն» էլ դյուրությամբ փոքրանում են, մանկանում՝ անկախ իրենց ֆիզիկական տարիքից: Սոցիալական տարիքի նման ընկալումն ու ցուցադրությունը հասարակական վերև - ներքև հակադրության ընդգծման և մեծին հնազանդության ցուցադրության ևս մեկ միջոց է դառնում:

Վերադառնալով բողոքի ձայնը երկրի բարձրագույն իշխանությունից և անձամբ առաջնորդից հեռացնելու խնդրին, պետք է նշել մեկ այլ հանգամանքի մասին ևս: Դա այսպես կոչված անձնական գործոնի շեշտադրումն է՝ արտաքսումը ներկայացնելով որպես սեփական միջավայրում գտնված որևէ մեկի (կամ մի քանիսի) հետ անախորժ, թշնամական վերաբերմունքի հետևանք, ինչն իհարկե չի նշանակում, թե չէր ընկալվում առաջադրված մեղադրանքի քաղաքական բնույթը: Այսպես, աքսորյալներից մեկը իր ողջ «անթերի» սովետական կենսագրությունը ներկայացնելուց հետո, եզրահանգում է, թե իր աքսորի պատճառը 36 լիտր կոլխոզի գինին է դարձել, որ նա՝ իր պահեստապետ եղած ժամանակ, հրաժարվել է տալ գյուղսովետի նախագահին: Հիմա հավատացած է, որ հենց գյուղսովետի նախագահն է վրեժ լուծել՝ իրեն և ընտանիքին աքսորի մատնելով (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 949): Նամակագիրներից մեկն էլ, չգտնելով որևէ այլ հիմնավոր պատճառ, ամենայն

անկեղծությամբ խոստովանում է իր՝ հարբեցող դառնալը մի կնոջ անհավատարմության պատճառով ու դրա հիման վրա իր գլխին «մեղադրանքներ» կուտակելը աշխատակիցների կողմից (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 238):

Ընդհանուր առմամբ, նամակ-դիմումների լեզուն, որքան էլ որ այն բողոքի լեզու էր, հաճախ համապատասխանում է խորհրդային *վերնների լեզվին*: Ըստ այդմ, դրանցում կարելի է տեսնել որոշակի առանցքային կետեր, որոնք կերտում էին խորհրդային օրինակելի քաղաքացու հանրայնորեն ընդունված կերպարը: Այսպես, կարևորվում է նամակագրի դասակարգային ծագումը (աշխատավորի՝ բանվորագյուղացիական ընտանիքում և այլն)՝ միանգամայն համապատասխան հասարակության սոցիալական կառուցվածքը դասակարգային տերմիններով ներկայացնելու, դասակարգային մոտեցում ցուցաբերելու բոլշևիկյան սկզբունքին: Մյուսը ազնիվ և բարեխիղճ աշխատավոր լինելու հանգամանքի շեշտադրումն է (հմմտ. աշխատանքի սոցիալիստական ընկալումը՝ որպես ոչ միայն նյութական անհրաժեշտություն, այլ նաև քաղաքացիական պարտք), անդրադարձն աշխատանքի արտադրողականությանը՝ խոսուն թվերով, մի բան, որ քննարկման լուրջ առարկա դարձավ Ստախանովյան շարժման արդյունքում և այլն:

Այս շարքին կարելի է ավելացնել նաև նամակագրի կամ գլխավոր մեղադրյալի անգրագիտությունը շեշտելը՝ հաշվի առնելով մեղադրական կատեգորիաների գաղափարախոսական բնույթը «... *հայրս եղել է մի անգրագետ գյուղացի հողագործ: Որտեղ անգրագետ գյուղացին, որտեղ «դաշնակ» քաղաքական դեմք ունեցող քաղաքական գործիչը, բոլորովին համատեղելի չէ և ապսուրդ է...*» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 2397):

Հայրենադարձ արքայալիների պարագայում ուշագրավ է նաև բնականության նախկին երկրի, այնտեղ տիրող կարգերի առավելագույնս փնտվումը՝ խտացված գույներով հակադրելով վերջիններս խորհրդային բաղձալի կյանքին. «...*Մենք ծագումով պարսկահայեր ենք: Սովետական Հայաստան եկել ենք Պարսկաստանի Բսպահանի Դովլաթավան գյուղից: Թեև այնտեղ մենք զբաղվում էինք հողագործությամբ, բայց ինչպես Պարսկաստանի բոլոր աշխատավորներն էին, այնպես էլ մենք, սեփականագուրկ, աղքատ ու թշվառ գյուղացիներ, միշտ պարտքերի ու հարկերի տակ խեղդված, սովի ու քաղցի, վշտի ու տառապանքի մեջ: Դրան ավելացրած բարբարոս մահմեդականի սուրբ, որը կախված է եղել միշտ մեր գլխին, մենք որպես հայեր դատապարտված ենք եղել ազգային և կրոնական հալածանքների: Եվ ահա մեզ համար ամենամեծ երջանկությունը հանդիսանում էր Սովետական երկիր*

վերադառնալ, ապրել ազատ ու երջանիկ կյանքով... Այստեղ մենք ստացանք մարդուն արժանի իրավունքներ, ստացանք հող, տուն, հաց: Առաջին անգամ մենք զգացինք, որ երջանիկ ենք, որ ապրում ենք սովետական բաղդավոր արևի տակ: Այդ էր պատճառը, որ մեր ընտանիքը ամեն տարի վաստակում էր 1600 կոլխոզային աշխօրեր...» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 919):

Նամակների այս գծերը փաստում են այն մասին, որ ինչպես խնդրանքի, այնպես էլ բողոքի ոճով խոսող արտոյալները միանգամայն տիրապետում են և *բոլշևիկյան լեզվով խոսելուն* (Коткин 2001): Այդ լեզուն է դառնում նամակ-դիմումներում ներկայացվող նրանց կենսագրությունների խմբագրման և վերաշարադրման միջոցը: Նամակագրության այս ընդհանուր միտումը, սակայն, չի բացառում առանձին դեպքեր, երբ, օրինակ, բոլշևիկյան լեզվին զուգահեռ կիրառվում է *վերնների* հետ խոսելու նաև այլ լեզու: Մի շատ ինքնատիպ և ուշագրավ նամակի պարագայում (որն, ի դեպ, «դիմում» է վերնագրված, բայց գրված է իբրև իսկական բողոք), այդ երկրորդ լեզուն, կարելի է ասել, *ինտելեկտուալի լեզուն* է (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 238): Նամակն ամբողջությամբ համեմված է ռուս և համաշխարհային գրականությունից (Պուշկին, Լերմոնտով, Սալտիկով-Շչեդրին, Շեքսպիր և այլք) շատ տեղին ու դիպուկ մեջբերումներով: Մասնավորապես, հատկանշական է նամակի սկզբում ազատության և հայրենիքի մասին երազող լերմոնտովյան գերեվարված հերոսի խոսքերին հղելը. *Узнать, для воли иль тюрмы / На этот свет родимся мы* (М. Лермонтов, Мцыри) արտահայտությամբ է նամակագիրը բացատրում արտաքսման իր գործի վերստին քննության պահանջը: Այս մեջբերումից անմիջապես հետո հեղինակը դիմում է մեկ այլ ստեղծագործության, թե՛ *Нет, я не споря / От прав моих не откажусь* (А. Пушкин, Цыганы)՝ ցույց տալով իր իրավունքներին մինչև վերջ տեր կանգնելու պատրաստակամությունը: Նա կետ առ կետ ներկայացնում է ՀԽՍՀ նախկին Անվտանգության մինիստրության ապօրինի վարմունքն իր նկատմամբ: Իրեն և քրոջն արտրելու որոշման անօրինականությունը նա հիմնավորում է դատի և հետաքննության բացակայությամբ՝ հղելով ԽՍՀՄ սահմանադրության 127-րդ հոդվածին և ուղղակի մեջբերում անելով հոդվածից. *«Ոչ ոք չի կարող ձերբակալվել այլ կերպ, քան դատարանի որոշմամբ»*: Հետևաբար, եզրակացնում, որ իր արտաքսումը նշանակում է Սահմանադրության արհամարհում: Իրեն դաշնակցական գործունեության մեջ մեղադրելը նա անհիմն է համարում, քանի որ չի ներկայացվել որևէ, թեկուզ փոքրագույն ապացույց: Ինքը մեկն էր, որ ստացել էր բարձրագույն մանկավարժական

կրթություն և միանգամայն իրավացիորեն համարում է, որ օգտակար կարող էր լինել իր գիտելիքներով խորհրդային հասարակությանը, մինչդեռ ստիպված է կյանքն անցկացնել Միբիրում. *«միթե՞ բահով ու տապոբով իմ կատարած աշխատանքն այդքան անհրաժեշտ է Ալթայի կրայի համար»*: Բայց նամակագրի կյանքի ողբերգականությունը չի ավարտվում իրեն ոչ հաճելի աշխատանքով զբաղվելով: Հայրենիքում նա թողել է ծեր ծնողներին և անչափահաս որդուն: Նամակի յուրաքանչյուր տողից անթաքույց բողոքի հետ միասին զգացվում է և խորը հեզմանքը խորհրդային կառավարության նկատմամբ: Այն չի խնայում մինչև անգամ խորհրդային պետության և բոլշևիկյան գաղափարախոսության դասակարգային գլխավոր հենարանին՝ «պրոլետարիատին»՝ ասելով թե փաստորեն իրեն *«կատարյալ «պրոլետար» դարձրին՝ աքսորելով առանց որևէ իրի և զրկելով ամենաչնչին տնտեսական հիմունքներից»*: Հղում անելով «Պրավդա» թերթի համապատասխան համարի առաջնորդդին, թե կապիտալիստական շրջապատը, արտասահմանյան թշնամանքը *«չեն կարող մեր երկրի ներսում ունենալ քիչ թե շատ զգալի հենարան»*, դնում է քաղաքական հալածանքների և խստությունների անտեղիության հարցը: Նամակագրի զայրույթն ու բողոքն իր քաղաքացիական և պարզապես մարդկային իրավունքների ոտնահարման դեմ այնքան բնական է և տրամաբանված, որ արդիական կարող է լինել բոլոր ժամանակների և վարչակարգերի համար, որոնցում անտեսված են ոչ միայն քաղաքացու, այլև մարդու ամենատարրական իրավունքները. *«Վերջապես, խորապես վիրավորված է իմ ինքնասիրությունը, և այդ ոչ միայն այն պատճառով, որ ինձ անտեղի աքսորել են Միբիր, այլ այն պատճառով, որ ես ունենալով բավականին կրթություն, կարծես թե անկարող եմ պաշտպանել իմ ամենակենսական շահերը, նամանավանդ որ արդարությունը իմ կողմն է»*:

Այս և նման բողոք-նամակների գոյությունը լույսի նեղ, բայց և առկայծող շող է ստալինյան մոայլ տարիներին տիրող մթին իրականության մեջ, որտեղ իշխող էր վախն ու վախից ծնունդ առած հասարակական բազում արատներ: Բողոքները գալիս են վկայելու, բարձրաձայնելու այն մասին, որ հասարակության տոտալ կառավարումն ու վերահսկողությունը որքան էլ որ խստագույն դրսևորումներ ունենան, միևնույն է, ի գորու չեն կատարելապես լռեցնել մարդու և քաղաքացու ձայնը: Եվ անհատականությունների դեմ պայքարն ու մարդկային գորշ զանգվածի ստեղծումը չունեն վերջնականապես հաջողելու շանսեր, քանի դեռ կան մարդիկ, որոնք կարող են հայտնել անհամաձայնություն և լինել պահանջատեր: Գուցե հենց նման

դիմումներն էին, որ շատ դեպքերում թուլացնում էին խորհրդային իշխանական աստյանների անսասան կամքն ու իրոք ստիպում նրանց վերանայել գործերը՝ որոշներին ազատելով սիբիրյան *հատուկ բնակեցումից*։ Սրա հետ մեկտեղ, նույնիսկ ամենաբուռն բողոքով գրված նամակներում հեղինակները հավատարիմ են մնում խորհրդային վերններից թելադրված լեզվի և վարքի կանոններին՝ մի տեսակ երկփեղկվելով ինքնաբուխ և պարտադրված լեզուների և վարքային դրսևորումների միջև։ Երկդիմի վարքային դրսևորման, թերևս, ամենաակնառու օրինակը արդարության վերականգնման պահանջի զուգորդումն է պետության առջև ամեն գնով արդարանալու ամենատարբեր միջոցների փնտրտուքի հետ։ Ինչպես հողվածի սկզբում նշեցի, արդարացման միջոցների փնտրտուքի մեջ է, որ երբեմն դյուրին է դառնում ուրիշներին՝ հարևաններին, համայնակիցներին, մինչև անգամ ազգակիցներին մատնելը՝ ջնջելով սահմանը «գոհի» և «մատնիչի» կերպարների միջև։ Իհարկե, այս վերջինն ավելի հատուկ է խնդրագրերին, սակայն որոշ բողոքագրեր ևս ամբողջապես գերծ չեն նման երկվությունից։ Գուցե այս երկվությունն էր խորապես զգացել նամակագիրներից մեկը, որ նույնացնում է իրեն մի դեմքով հին տարվան, անցյալին, մյուսով՝ նոր տարվան, նոր կյանքին նայող հռոմեական երկդիմի Յանուս աստծու հետ՝ հուսալով, որ որքան որ անխուսափելի է հնի վախճանն ու նորի գալուստը, նույնքան անխուսափելի կլինի և իր արդարացումը (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 238)։

Գրականության ցանկ

Մարության Հ. (2015), Ո՞վ էր մեղավոր. Ստալինյան բռնությունների պլանավորման և իրականացման մասին բռնադատվածների ու նրանց ժառանգների պատմաչաբերը.- Հ. Խառատյան, Գ. Շագոյան, Հ. Մարության, Լ. Աբրահամյան, Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրյա, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, էջ 199-237

Շագոյան Գ. (2015), Ամբողջատիրության առօրյան (սոցիալական հարաբերությունների փոփոխությունները ստալինյան արդիականացման պայմաններում).- Հ. Խառատյան, Գ. Շագոյան, Հ. Մարության, Լ. Աբրահամյան, Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրյա, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, էջ 154-198

- Арендт Х. (1996), Истоки тоталитаризма, ЦентрКом, Москва
- Коткин С. (2001), Говорить по-большевистски (из. кн. «Магнитная гора: Сталинизм как цивилизация»).- Американская русистика: вехи историографии последних лет. Советский период, Самара: «Самарский университет», с. 250-328
- Лившин А., Орлов И. (1998), Революция и социальная справедливость: Ожидания и реальность (Письма во власть. 1917-1927).- Cahiers du monde russe : Russie, Empire russe, Union soviétique, États indépendants, vol. 39, n°4, Octobre-décembre 1998. pp. 487-513
- Накобыан А. (2017), “Peredovie” Comrades: The Image of an “Ideal” Soviet Citizen According to Letters of Complaint Written by Armenian Deportees From 1949.- Analytical Bulletin. Armenian-Georgian Cooperation Through Academia and Students’ Inclusion, № 10, Yerevan, pp. 126-147
- Ստեփանյան Գ. (2015), ԴԱՆ, Վարդենիս
ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 238
ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 629
ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 807
ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 827
ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 919
ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 949
ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 962
ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 2216
ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, գ. 2275
ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, թ. 2397
ՀԱԱ, ֆ. 1191, ց. 6, թ. 2451